Խ. ԱԲՈՎԵԱՆԻ ԾՆՆԴԵԱՆ ՏԱՐԻՆ

(Մի էջ մեր « Աբովեան եւ Դորպատ » անտիպ աշխատութիւնից)

Ո՞ր թուականին է ծնուել Խաչատուր Աբովեան։ Այդ, ինչպէս նաեւ մի շարք ուրիշ հարցերի մասին իրար հետ համաձայն չեն մեզի ծանօթ աղբիւրները։ Մինչեւ իսկ իր՝ Խ. Աբովեանի սեփական տուեալները տեղ տեղ հակասում են մէկմէկու։

Այսպէս՝ նա գրում է իր մի կարճ ինքնակենսագրականի մէջ, որ պահուած է մնացել իր ձեռագիրներում մի թերթ թղթի վրայ, և որ գրի է անցրել նա մի « անգին բարեկամի համար », թէ՝ « 1804–5–ին ծնուեցայ ես Քանաքեռ գիւղում, 5 վերստ հեռու Երեւանից կարճ ճանապարհով » [1]։

Դարձեալ՝ 1853 թուին Խ. Աբովեանի այրիի կողմից Անդրկովկասի զպրոցական իշխանութեան ներկայացուած և Աբովեանին վերաբերեալ « Ծառայութեան Յուցակ »ի մէջ ասուած է [2], թէ նա, Աբովեան, իր անհետանալու միջոցին (1848 թ.) եղել է 43 տարեկան։ Այդ նշանակում է ուրեմն, որ Աբովեան, համաձայն այդ տուեալի եւս, ծնուած պիտի լինի 1805–ին։

Միւս կողմից, սակայն ուրիշ՝ աւելի զօրաւոր տուեալներից հետեւցնել կարելի է, որ նա, Խ. Աբովեան, ծնուել է ոչ թէ 1804–ին կամ 1805–ին, այլ, ամենայն հաւանականութեամբ, 1809–ին։

1. 1843–ին իր իսկ ձեռքով կազմած « Յուցակ Ծառայութեան » մէջ, ներկայացուած Անդրկովկասի զպրոցական իշխանութեան, Խ. Աբովեան ասում է որոշապէս, թէ « 34 տարեկան » է եղել ինքն այդ ժամանակ։ Համաձայն այդ տուեալի, ուրեմն, նա ծնուած պիտի լինի 1809–ին, (1843–34 = 1809) [3]։

2. Խ. Աբովեանի ձեռքով 1844 թ. կազմուած մի ուրիշ « Յուցակ Ծառայութեան » մէջ « Երեսունհինգ տարեկան » է ասուած իր մասին։ Համաձայն այդ տուեալի եւս, ուրեմն, նա ծնուած պիտի լինի 1809–ին։ (1844–35 = 1809) [4]։

3. Դեռ 1829–ին, Նիկոլայ կայսեր ուղարկած իր խնդրագրի մէջ, Աբովեան գարձեալ շատ պարզ գրում է. « Հասակ իմ քսանմեայ »։ Ուրիշ խօսքով՝ նա իր ծննդեան տարին համարում է 1809 թուականը [5]։

4. Թիֆլիսի զինուորական նահանգապետ Սարեկալովի մի պաշտօնական թղթի մէջ, որ վերաբերում է Աբովեանին Դորպատ ուղարկելու խնդրին և նրան այդ նպատակով պետական գանձարանից ուսման թոշակ նշանակելուն, նմանապէս ասուած է որոշ, թէ 1829 թ. Մասխի զգաթը բարձրանալիս Ֆրիդրիխ Պարրոտին ուղեկցել է 20 տարեկան երիտասարդ Խաչատուր Աբովեան (1829–20 = 1809) [6]։

5. Դորպատի համալսարանի ուսուցչապետ Ֆրիդրիխ Պարրոտ, բարերարը Աբովեանի գրում է իր « Ճամբորդութիւն դէպի Արարատ » աշխատութեան մէջ, թէ 1829–ին իրեն դէպի Մասխի կատարն ուղեկցող Խ. Աբովեանն այն ժամանակ « Հազիւ 20 տարեկան էր »։ (1829–20 = 1809) [7]։

6. Իր ամուսնութեան առթիւ Էջմիածնի Սինոդին Աբովեանի ներկայացրած խընդրագրի մէջ մենք գտնում ենք մի քանի թուական տուեալներ, որոնց համաձայնութիւնից նմանապէս հետեւցնել կարելի է, որ նա ծնուած է 1809–ին, յամենայն դէպս՝ ոչ 1804–ին կամ 1805–ին [8]։

Յիշուած առաջին հինգ կէտերը, տեսնում ենք, միանգամայն որոշապէս ասում են մեզ, որ Աբովեանի ծննդեան տարին 1809 թ. ընդունել պէտք է։ Այդ նոյնը հաւանական է դարձնում և՝ վեցերորդ կէտը։

Առաջ բերենք երկու կէտ եւս, որ թէեւ յօգուտ 1810 թուականի են խօսում ըստ երեւոյթին, բայց որոնք դարձեալ 1809-ով փոխարինել պէտք է մեր կարծիքով։ Դրանք են։

7. 1826–ին Աբովեանի գրած և զօրավար Պասկեւիչի անուան նուիրած « Խնդամիտ զգացմունք » գրուածքի վերնագրի մէջ մենք գտնում ենք մի քանի թուական տուեալներ, որոնց համաձայնից նմանապէս հետեւցնել կարելի է, որ նա ծնուած է 1809–ին, յամենայն դէպս՝ ոչ 1804–ին կամ 1805–ին [8]։

Յիշուած առաջին հինգ կէտերը, տեսնում ենք, միանգամայն որոշապէս ասում են մեզ, որ Աբովեանի ծննդեան տարին 1809 թ. ընդունել պէտք է։ Այդ նոյնը հաւանական է դարձնում և՝ վեցերորդ կէտը։

Առաջ բերենք երկու կէտ եւս, որ թէեւ յօգուտ 1810 թուականի են խօսում ըստ երեւոյթին, բայց որոնք դարձեալ 1809-ով փոխարինել պէտք է մեր կարծիքով։ Դրանք են։

7. 1826–ին Աբովեանի գրած և զօրավար Պասկեւիչի անուան նուիրած « Խնդամիտ զգացմունք » գրուածքի վերնագրի մէջ ասուած է [9], թէ հեղինակն այդ յօրինել է « ի վեշտասան. ըստ իւրում », 16 տարեկան ժամանակ. ըստ այդմ՝ նա ծնուած պիտի լինի ուրեմն 1810 թուին։ Բայց մենք կարծում ենք, որ « Վեշտասան » բառն այդտեղ բացատրել պէտք է այն իմաստով միայն թէ հեղինակը լրացրած է եղել իր 15 տարին և մտած՝ 16–րդի մէջ, ու վերջինս, 16–ը դեռ չբոլորած՝ իր տարիքը նա նշանակել է այնու ամենայնիւ 16։ Մի բան, որ յաճախ պատահում կանոնի մէջ։ Մի որոշ տարիք դեռ չլրացրած՝ անսովոր բան չէ, որ մարդիկ լրացրած դիտեն այն և ըստ այնմ էլ նշանակեն ու ցոյց տան իրենց տարիքը մանաւանդ երբ դեռ պատանի են, ցանկանալով այդ կերպ աւելի հասուն ներկայացնել իրենց։

8. Աբովեանի ծննդեան տարուայ մասին մի կողմնակի մատնանշումն է և նրա հետեւեալ խօսքը « Վէրք Հայաստանի »ի [10] յառաջաբանում. « Երեսուն տարուայ փակ բերանս Աղասին բաց արեց »։ Այսինքն՝ Աբովեան իր « Վէրք »ը գրել է 30 տարեկան հասակում։ Եւ քանի որ « Վէրք »ը հեղինակուել է, յայտնի է, 1840–ին, քանի որ, դարձեալ, Աբովեան 30 տարեկան է եղել այդ թուին, ապա ուրեմն ծնուած պիտի լինի նա, համաձայն այդ տուեալի, 1810–ին։ Աւելի ճիշտը սակայն 1809–ին, քանի որ « Վէրք »ը գրուած պատրաստ է եղել արդէն 1840–ին։ Աբովեան այն գրել սկսել է (յառաջաբանը նախ, ի հարկէ), ամենայն հաւանականութեամբ, 1839–ին։ Եւ որովհետեւ 30 տարեկան է եղել նա այդ ժամանակ, ապա ուրեմն ծնուած պիտի լինի 1809–ին։

Մի քանի ուրիշ փաստեր նմանապէս հաւաստի են դարձնում որ Աբովեան ծնուած պիտի լինի ոչ թէ 1804–ին կամ 1805–ին, այլ աւելի ուշ։

9. Այսպէս, յայտնի է, որ նրա մանկութեան ընկերն է եղած Ստեփանոս Նազարեան։ Պօղոս վարդապետի վարժարանում (Թիֆլիս), այնուհետեւ էլ Ներսիսեան Դպրոցում, նրանք միեւնոյն դասարանի աշակերտ են եղած։ Արդ, Նազարեան ծնուած է, համաձայն իր պաշտօնական թղթերի, որ պահուած են Դորպատի համալսարանի դիւանում և նոյն քաղաքի զինուազիայի վաւերագրերում, 15 մայիս 1814 թ. [11]։ Մինչեւ այժմ աւանդական սովորութիւն է եղած՝ դասագրքերում և

---

(1) Ներսէս Տէր–Կարապետեան՝ « Խաչատուր Աբովեան »։ Բ. տպագրութիւն, Թիֆլիս 1911, էջ 14։

(2) « Դիւան Խաչատուր Աբովեանի » կազմ. Եր. Շահազիզ։ Երեւան 1940, էջ 193,

(3) Նոյնտեղ, էջ 96։

(4) Նոյնտեղ, էջ 143–4։

(5) Նոյնտեղ, էջ 199–201։

(6) « Հանդէս Ամսօրեայ » 1929, 402–403։

(7) « Reise zum Ararat », Berlin 1834, էջ 163։

(8) « Դիւան », էջ 205–206. Հմմտ., էջ 48,

(9) Նոյնտեղ, էջ 363։

(10) « Վէրք Հայաստանի », յառաջաբան։

(11) « Ստեփանոս Նազարեան Դորպատում » մեր անտիպ աշխատութիւնը։ Հմմտ. նաեւ մեր « Դորպատի Հայ Ուսանողութիւնը », Վիեննա 1942, էջ 17։

digitised by A.R.A.R.@

այլ գրուածքներում նշանակել 25 դեկտ. 1812 թ., որպէս Նազարեանի ծննդեան թուական։

Հակառակ այն բանի, որ Խաչատուր Աբովեան, ինչպէս վկայում է Ս. Նազարեան, դասարանում եղել է «Զափահաս աշակերտներից մինը, գուցէ և աւելի մատխոհը իւր ընկերների մէջ»[12], չնայած որ դարձեալ, այն ժամանակները զպրոցական վարչութիւնները մի առանձին խստութիւն չէին ցոյց տալիս աշակերտների տարիքի վերաբերմամբ, նրանց այս կամ այն դասարանն ընդունելիս, այնուամենայնիւ հնարաւոր չի թւում մեզ հասակի 7–8 (և կամ մինչեւ իսկ 9–10) տարուայ տարբերութիւն՝ սրտակից երկու ընկերների, միեւնոյն դասարանում կողք–կողքի նստած աշակերտների մէջ։ Անկարելի բան է, որ, օրինակ, 1826–ին, Ներսիսեան Դպրոցի Գ. դասարանում եղած ժամանակ, Աբովեան լինէր 21–22 տարեկան մի չափահաս երիտասարդ արդէն, իսկ Ս. Նազարեան՝ հազիւ 12 տարեկան (ըստ աւանդաբար ընդունուածի՝ թէկուզ 14 տարեկան) մի դեռատի տղայ։

Հենց այն պարագան, որ Խ. Աբովեան իր ծննդեան թուականը (համաձայն տարեալներից մէկի) անորոշ կերպով է միայն ցոյց տալիս, 1804 կամ 1805, այդ ապացոյց է արդէն, որ նա ինքն եւս շատ վստահ չէ եղել դրան և այլ առիթներով (տես վերը) ուրիշ թուական է մատնանշել իր ծննդեան տարուայ մասին։ Եւ կամ՝ պարզապէս ինքն էլ չէ իմացել, թէ երբ է ծնուել. մի բան, որ անսովոր չէր այն ժամանակների, երբեմն մինչեւ իսկ մեր ժամանակների համար։ Մոռնալու չէ և այն պարագան, որ Աբովեանի օրով ծննդեան մատեաններ չէին պահւում առհասարակ, կանոնաւոր գրանցումներ չէին կատարւում։

Վերջապէս անտես անելու չէ այն եւս, որ Աբովեան – և ինչո՞ւ միայն Աբովեան – յաճախ հակասական տեղեկութիւններ տալիս է իր կեանքի այս կամ այն դէպքի, այս կամ այն խնդրի մասին։ Նման հակասական տուեալներ կան օրինակ, անգամ իր հօր անուան վերաբերմամբ – Յարութիւն, Աւետիք։ Երբեմն մէկը, երբեմն՝ միւսը։ Տարբեր թուականներ են նշանակուած Աբովեանի գրութիւններում նաեւ իր զաւակների ծննդեան տարուայ մասին։ 1844 թ. «Յուցակ Ծառայութեան»[13] մէջ մատնուած է, թէ Զարման, Աբովեանի աղջիկը, չորս տարեկան է եղած այդ ժամանակ, այն մինչ նորածին երեխայ էր նա, 4 տարեկան էր՝ որդին։ (Գուցէ և պատահական վրիպում է այդ)։

Անսովոր բան չեն նման հակասութիւնները, առհասարակ, կեանքի և գրականութեան պատմութեան մէջ։ Ո՞ր թուականին է ծնուել, օրինակ, Բաֆֆին. 1835–ին, 1837–ին։ Իր ծննդեան հարիւրամեակը տօնելու առթիւ վէճեր ծագեցին այդ մասին։ Դարձեալ՝ մինը տեսանք, որ Ս. Նազարեան, ըստ պաշտօնական տուեալների, ծնուած է 1814 թ. մայիս 15–ին։ Անկարելի չէ սակայն, որ շատեր այսուհետեւ եւս շարունակեն գրել 25 դեկտ. 1812 թ.։

Վերը յիշուած տուեալները և փաստերը միանգամայն համոզիչ են դարձնում, մեր կարծիքով, այն, որ Աբովեանի ծնունդեան ամենահաւանական տարին ընդունել պէտք է ոչ թէ 1804-5, այլ՝ 1809 թուականը*։

Տկտ. Ա. ԱԲԵՂԵԱՆ

(12) «Հիւսիսափայլ» 1858, էջ 144։
(13) «Դիւան», էջ 144։

(*) Այս հնթադրութիւնն առաջին անգամ մեզնում արել է գրագէտ Ա.–Դ.օն, պրպտելով Աբովեանի ամբողջական թղթերը և գործերը Երեւանի գաւառական զպրոցի գիւանում։ Վերը մեր առաջ բերած 2–րդ կէտն էլ իրեն հիմ ունենալով՝ նա ժամանակին յայտնել է այդ կարծիքը։ («Նոր Հոսանք», Թիֆլիս 1914, թիւ 5, «Գործ», Բազու 1917, թիւ 5-6-7-8)։

ՀԱՅ ՀՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԿՈՐԻԶ ՄԸ

Որպէսզի բարձրագոյն ուսումնասիրութիւններու գործնական զպրոցի (Ecole Pratique des Hautes Etudes) մէջ արդէն երեք տարի է որ կը կատարուին հայ հնագիտական ուսումնասիրութիւններ։

Ի՞նչ է առհասարակ այդ գործնական զպրոցի նպատակը։ Գիտական աշխատութիւններուն նպաստող ձեռնարկ մըն է։ Գիտութեան ամէն մէկ ճիւղ կը ղեկավարուի Ֆրանսայի լաւագոյն մասնագէտներով։ Այսպէս՝ քրիստոնէական հնագիտութեան ղեկավարն էր առաջ հոչակաւոր Gabriel Meillet, իսկ այժմ ոչ պակաս հեղինակաւոր զիտնական՝ André Grabar-ը։ Մասնակցող աշակերտներէն կը պահանջուի պարբերական զեկուցումներ կարդալ իրենց նիւթերու շուրջ, որ քննութեան կ'առնուին ունկնդիրներու կողմէն ըստ. Grabar-ի ղեկավարութեամբ։ Դասընթացքը իր հերթին կը կարդայ դասակավարը իր հերթին կը կարդայ դասախօսութիւններ զանազան մասնագիտական նիւթերու շուրջ։ Այս կենդանի շփումը երիտասարդ և տարիքոտ գիտուններու միջեւ չափազանց բեղմնաւոր է իր արդիւնքներով։ Վիճաբանութիւններու ընդունելիներով։ Վիճաբանութիւններու ընդունելիներով։ Գիտնականները նոր նիւթեր կը ստանան, տարբեր կարծիքներ կը լսեն և կարող են աւելի հարստացնել իրենց աշխատութիւնները նախ քան զանոնք տպագրութեան յանձնելը։

Կենդանի շփումը առանձնապէս կարեւոր է հնագէտներու համար։ Ցիրաւի՝ վերջի ժամանակներս հնագիտական տուեալները այնքան շատցեր են և բարդացեր, որ անհնար է մէկ նիւթի շուրջ գիտական աշխատանք պատրաստել առանց ի նկատի ունենալու դրացի նիւթերը, առանց շփուելու ուրիշ մասնագէտներու հետ, առանց օգտուելու անոնց փորձառութենէն, առանց կուտակելու նոր և նոր փաստեր։ Այսպէս օրինակ՝ ֆրանսական ռոմանական քանդակագործութեան մասնագէտը կարող չէ անտեսել ոչ իրլանտական, ոչ հին հռոմէական, ոչ զպտական, ոչ հայկական, ոչ պարսկական արուեստները։ Եւ այդ բոլոր արուեստներուն պէտք է ծանօթ ըլլալ ոչ թէ ընդհանուր աշխատութիւններէ, այլ ամենալուրջ և մանրակրկիտ ձեւով։ Եւ որովհետեւ սա վեր է մէկ մարդու կարողութենէն, ուրիշ մասնագէտներու հետ շփուելով է որ պէտք է կատարուի տարբեր արուեստներու համեմատական ուսումնասիրութիւնը։

Եթէ նման մեթոդը կարեւոր է ընդհանրապէս հնագէտներու համար, ան անհրաժեշտ է մանաւանդ հայ հնագիտութեան համար։ Դժբախտաբար մինչեւ այժմ հայ արուեստը զիտուած չէ ընդհանուր մարդկային արուեստի լայն հորիզոններէն։ Հայ արուեստով զբաղած են կամ եւրոպացիներ, որոնք շատ քիչ տեղեկութիւն են ունեցած հայ մշակոյթի մասին, կամ հայեր՝ որոնք բաւականաչափ տեղեակ չեն եղած եւրոպական արուեստին։ Այդ պատճառով ալ հայ արուեստի ուսումնասիրութիւնը կատարուած է մեկուսացած ձեւով։ Նոյնիսկ հայ հնագիտութեան խոշորագոյն զէմքը՝ Թորամանեան, որու առջեւ կը խոնարհին Strzygowski-ի, Baltrušaitis-ի և Grabar-ի պէս եւրոպացիք, զբաղած էր բացառապէս հայ արուեստով։ Անշուշտ ան ըրած էր որոշ համեմատութիւններ եւրոպական արուեստներու հետ, բայց այդ համեմատութիւնները ընդհանուր բնոյթ կը կրեն. այդ պատճառով եզրակացութիւններն ալ ընդհանուր գաղափարներ են միայն և ոչ թէ յատուկ, բազմաթիւ փաստերու վրայ յեցած վերջնական դրութիւններ։ Մինչդեռ հայ հնագիտութեան շատ խնդիրներ հնարաւոր է լուծել միայն օտար արուեստներու համեմատական ուսումնասիրութեան միջոցով։

digitised by A.R.A.R.@